

Դեռ Գերմանիա եղած ժամանակ Ֆ. Ն. Ֆինքը եզնիկ վ. Գեան-
ջեցեանի եւ Յակոբ Մանանդեան հայ բանասէրների ընկերակցութեամբ
սկսեց ձեռնարկել «Հանդէս Հայագիտութեան—Zeitschrift für armenische
Philologie» պարբերական հրատարակութեան, որի ա. պրակը լոյս տեսաւ
1901 թ. վերջերը Մարբուրգում: Հանդէսը լոյս է տեսնելու տարէն չորս
անգամ եւ կը սպէ հայոց լեզուի եւ բանասիրութեան վերաբերեալ յո-
ղուածներ հայերէն, գերմաներէն եւ այլ լեզուներով: Երիտասարդ հե-
ղինակը բացի այդ ունի հրատարակած արդէն մի քանի գրուածքներ
Հայոց բանասիրութեան վերաբերեալ. — «Lehrbuch der neuostarmeni-
schen Litteratursprache» (Մարբ. 1900 թ.) • Եպիփան Կիպրացու «Εκθεσις
πρωτοκλινσιων πατριαρχων τε και μητροπολιτων» (Մարբ. 1901 թ.) • «Նե-
ղոս Դոքսապատսի Կարգադրութիւն պատրիարքական աթոռոյն » • (յոյն
բնագրաւ, էջմ. 1901 թ.) • «Die altfranzösischen Laute des 13 Jahrhun-
derts nach dem Zeugnis mittelarmenischer Transskriptionen» [Neuere
Sprachen] •

Ներկայումս Ֆինք քոյր եղբայրը գտնուում են Տփլիսում: Ֆ. Ֆին-
քը պարապում է ձեռագրաց ուսումնասիրութեամբ եւ միեւնոյն ժամա-
նակ թարգմանում է գերմաներէն Ղ. Աղայեանի «Արութիւն եւ Մանու-
էլ» վէպը, իսկ օր. Ագնէս Ֆինքը Ա. Ահարոնեանի «Պատկերներ»ը:

Ֆ. Ֆինքի առաջին գրական գործն է «Gedichte», որ տպուել է
1891 թ. Կրեֆելդ: Ունի ուրիշ լեզուաբանական աշխատութիւններ այլ
եւ այլ լեզուների վերաբերեալ 12 հատոր, որոնց մի առ մի թուելը
աւելորդ ենք համարում:

ՀԱՅԿ ՏԷՐ-ԱՍՏՈՒԱԾԱՏՐԵԱՆՑ

ԱԶԳԱՅԻՆ ԼԵԶՈՒԱԳԻՏՈՒԹԻՒՆ

Բ. ԿՈՐ-Ն-Զ-Ի-Մ, ԿՈՐ-ՈՒՍ-ԱՆ-Ե-Մ, ԿՈՐ-Ծ-ԱՆ-Ե-Մ

Այս բուն հայերէն բառերն արդէն համեմատեց Պարիզի Համալսա-
րանի ուսուցչապետներէն հմուտ հայագէտն Ա. Մէյէ (Mémoires de la
Société de Linguistique de Paris, հատ. 10, էջ 278), որուն կար-
ծիքն ընդունեց նաեւ լեզուագիտական մատենագրութեան մէջ մեծ համ-
բաւ ունեցող Հիւբշման ուսուցչապետը (Anzeiger für indogermanische
Sprach- und Altertumskunde. Beiblatt zu den Indogermanischen
Forschungen. Herausgegeben von Wilhelm Streitberg, հատ. 10, էջ 48):

Այն կարծիքը՝ որուն համեմատ յիշեալ բառերը լեւոտ. *gurstu, gurt* = ermatten, *gurdens* = matt, պրուս. *gurins* = arm բառերու հետ կապ ունին, ես ամենեւին չեմ կրնար ընդունիլ: Նայինք թէ ինչո՞ւ:

Այս բառերն ընդհակառակը կը պատկանին՝ ըստ իս՝ հնդեւր. **g²er* արմատին, ինչպէս հայ. *կեր* = Nahrung, Frass, Beute, Lockspeise, Köder, *կեր-ի* = ich ass, *-կեր* = -essend (դ. օր. *վեսկեր* = fleisches-send), *կեր-ա-կուր* = Nahrung, Speise, *կուր* = Frass, *կո-կորդ* = Kehle, յուն. *βι-βρώ-σχω* = fresse, esse, verzehre, *βορά* = Frass, *βορός* = gefrässig, սանսկ. *եւ ալ. -gara* = verschlingend (դ. օր. *ajā-garā* = ziegenverschlingend = Boa), *ալ. aspōgarəm* = rosseverschlingend, լատ. *-vorus* = fressend (դ. օ. *carni-vorus* = fleisch-fressend), ahd. *quērdar* = Lockspeise, Köder, Lampendocht, լիթ. *geriù, gėrti* = trinken, *gerklė* = Kehle, Gurgel, *gurklỹs* = Kropf, հ. եկ. *սլ. ժիրա(ն), ժրկսի* = verschlingen, *grũlo* = Kehle. Միով բանիւ՝ յիշեալ բառերու մէջ հայ. *կոր* արմատն հաւասար է, ըստ իս, հնդեւր. **g²or*ին, նոյնը կարող ենք ըսել նաեւ յիշեալ **g²er*ի համար, միայն ուրիշ ձայնաւորով (Ablaut *e : o*) :

Այս հայ. *կոր* = հնդեւր. **g²or*, հայերէն *կոր-ն-չ-ի-ւն*, *կոր-եայ* = *pérdersi, morire, rovinarsi*, *կոր-ուս-ան-ե-ւն* = *pérdere, distrúggere, uccidere* ալ նախահայերէն լեզուի մէջ առաջ նոյն նշանակուած թիւնն ունէր ինչպէս հայ. *կեր* = հնդեւր. **g²er*, եւ միայն յետոյ ընդունեց փոխուած նշանակութիւնները, զոր հաստատելու համար ունինք հայերէն լեզուի մէջ նման օրինակներ ալ: Այսպէս՝ հայ. *ծախ-ե-ւն* կը նշանակէ՝ *spendere*; «ուտել, լափել» — *զկերակուրս* = *mangiār tutto, consumare, divorare*, բայց նաեւ «վատնել, մաշել, ջնջել, կորուսանել» = *consumare, finire, spéndere, disperdere, pérdere, distrúggere, uccidere, divorare, dilacerare*, որ մի եւ նոյն ժամանակ ցոյց կուտայ թէ՛ *կեր*, *կուր* մէկ կողմանէ եւ *կոր-ն-չ-ի-ւն*, *կոր-ուս-ան-ե-ւն* միւս կողմանէ նշանակութեամբ ալ նոյնարմատ են եւ ոչ ալ տարբեր արմատներու կը պատկանին: Ինչ որ *կոր-ծ-ան-ե-ւն* բառին կը վերաբերի, այս՝ իրեն ծ բաղաձայնն ստացած է եղծանեւ բառէն. որ նոյն նշանակութիւնն ունի ինչպէս *կոր-ծ-ան-ե-ւն* = «կորուսանեմ»:

Հայ. *կոր-իւն* ալ այս *կոր-* արմատէն է. հմմտ. ար-իւն = հնդեւր. **sr-iun* ըստ Օսթհոֆ-ի = das Fliessen, Blut (տե՛ս «Zur armenischen Laut- und Wortforschung», Sparchwissenschaftliche Abhandlungen լեզուագիտական թերթիս մէջ, հատ. 2, պրակ 4. Budapest, 1901), հայ. *-իւն* վերջաւորութեամբ, որուն վերայ անուանի լեզուագէտն Օսթհոֆ՝ Հայդելբերգի Համալսարանի ուսուցչապետը՝ նոյնպէս շատ հըմուտ կերպով կը խօսի մի եւ նոյն թերթին մէջ: Ըստ իս՝ հայ. *կոր-իւն* = «որ կը կորսուի մօրէն (չկայ արդէն մօր որովայնի մէջ), կը ծնուի»:


Մեր լեզուի մէջ վերջապէս ուրիշ կոր = curvo արմատ մ'ալ ունինք որ հնդեւր. *kor է : Այս կոր = curvo ըստ Ֆ. Միւլլէր-ի (Wiener Zeitschrift für die Kunde des Morgenlandes, հատ. 10, էջ 354) եւ ըստ Հայկազեան Բառարանի՝ = յուն. κυρτός, լատ. curvus : Այս համեմատութիւնն ապահով է, ըստ Հիւբշմանի (Armenische grammatik, I.520) . բայց առանց տարակուսի կարելի է, ինչպէս ես ալ Միւլլէր-ի այս կարծիքը սիրով կ'ընդունիմ :

Budapest .

ՂՈՒԿԱՍ ԲԱԴՐՈՒՊԱՆԵԱՆ
ԱՆԵՑԻ



ՔՐԻՍՏԱՓՈՐ ՔՕԼՕՄՊՈՍԻ ՄԱՍՈՒՆՔՆԵՐԸ



Պատմութեան մէջ տարօրինակ էջ մը կը ներկայացնէ Քօլօմպօս-ի Ոգիսականը . ոչ ոք այնքան տեղափոխուած, այսինքն յաճախակի թաղուած է : Քրիստափոր Քօլօմպօս-ի փափաքը եղած է թաղուիլ այն աշխարհագրական լայնութեան մէջ, զոր ինք գտած է . իր վերջնական ընտրութիւնը եղած է Սան-Տօմէնիկօ քաղաքին Մայր-եկեղեցին, նոյն անունով կղզիին մէջ, որին ինք Հիսբանիօլա (Hispaniola) անունը տուած էր : Վալլաաօլիտ-ի (Valladolid) մէջ էր որ յոգնութենէ եւ թըշուառութենէ մաշած՝ 1506-ին Համբարձման օրը մեռաւ եւ նոյն քաղաքին Սան-Ֆրանչիսկօ եկեղեցիին մէջ առժամապէս թաղուեցաւ նա : Եօթը տարի յետոյ մարմինը փոխադրուեցաւ Սէվիլ-ի (Seville) մէջ Las Cuevas-ի կարդուսեան (Chartreux) մենաստանը եւ դրուեցաւ Սանթօ-Քրիսթօ-ի մատուռին մէջ, ուր Ֆէրալինանտ թագաւորը անոր վրայ պարզ դամբանադիր մ'արձանադրել տուաւ : Հոն՝ մօտաւորապէս քառորդ դարի մը չափ կարողացաւ հանգիստ մ'առնել այն մարդը, որին ոսկորները մշտատեւ փոխադրութեան մը սահմանուած էին : Սակայն 1536-ին իր Տիէկօ (Diego) որդիին հետ կրկին փոխադրուեցաւ Հիսբանիօլա կղզին, Սան-Տօմէնիկօ-ի Մայր-եկեղեցիին աւագ խորանին քովի դերեղմանին մէջ : Հոն՝ երկու հարիւր քսան տարիներէ աւելի կը մնայ . բայց երբ 1795-ը վրայ հասնելով Հիսբանիօլա կղզիին արեւելեան մասը Պալ-ի (Bàle) դաշնագրութեան համեմատ Ֆրանսայի սլիտի յանձնուէր, պայմաններէն մին այն եղաւ թէ՛ Քրիստափոր Քօլօմպօս-ին ոսկորները Հաւանա սլիտի փոխադրուէր եւ հետեւաբար նոյն տարիին դեկտեմբեր 20ին օրը երրորդ փոխադրութիւնը տեղի ունեցաւ : Հոովմէական եկեղեցիին ամենէն վեհ արարողութիւններով եւ քաղաքական, զինուորական ու կղերական բարձրաստիճան անձնաւորութիւններու ներկայութեամբ